ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի խորհրդի
2013թ.-ի ապրիլի 17-ի թիվ 11/02Լ որոշմամբ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմաններին համապատասխանության վերաբերյալ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի խորհրդի կողմից հաստատված բանկի Ներքին աուդիտի 2012թ-ի տարեկան Աշխատանքային ծրագրի համաձայն, բանկում կատարված համալիր և նպատակային ստուգումների շրջանակներում՝ Ներքին աուդիտի կողմից իրականացվել են ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմաններին բանկի ներքին հսկողության համակարգի համապատասխանության վերաբերյալ ստուգումներ և ուսումնասիրություններ:

Հաշվետու տարվա ստուգումների ընթացքում ուսումնասիրվել են բանկի գործունեության համապատասխանությունը ՀՀ օրենքների, այլ իրավական ակտերի, բանկի կառավարման մարմինների կողմից հաստատված ներքին իրավական ակտերի պահանջներին:

Ստուգումների նպատակն է հանդիսացել բանկում առկա ռիսկերի բացահայտումն ու գնահատումը, բանկի կողմից դրանց կառավարման մակարդակը և արդյունավետ ներքին հսկողության համակարգի ներդրման գնահատումը, ինչի նպատակով ստուգվել են ներքին հսկողության գործուն համակարգի ներդրման ուղղությամբ կատարված աշխատանքները:

Ներքին հսկողության համակարգի ստուգումները ներառել են նաև բանկում՝ ՀՀ կենտրոնական բանկի, Արտաքին և Ներքին աուդիտի ստուգումների արդյունքներով արձանագրված խնդիրների վերացման և դրանց գծով տրված հանձնարարականների կատարման ուղղությամբ բանկի կողմից իրականացված միջոցառումները:

Կատարված աշխատանքների հիմնական նպատակն է եղել բավարար հիմքերի ստեղծումը, որոնք հնարավորություն կընձեռեն արժանահավատ կերպով գնահատել բանկի ներքին հսկողության համակարգի արդյունավետությունը և կազմել համապատասխան եզրակացություն:

Հիմք ընդունելով վերը նշված աշխատանքների արդյունքները՝ Ներքին աուդիտի կարծիքով 2012թ-ի գործունեության ընթացքում ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի ներքին հսկողության համակարգը համապատասխանել է ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմաններին:

Ներքին աուդիտի վարչության պետ /
Գլխավոր աուդիտոր՝ **Հովհաննես Հովհաննիսյան**